**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**
**ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/9** ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Աշոցք 24 մայիսի 2019թ. ժամը 11:00

*Մասնակցում էին՝*

| | |
|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ | Գևորգ Հովհաննիսյան |
| Անդամներ | Արտակ Հովհաննիսյան |
| | Ավետիք Ամիրյան |
| Գնահատող հանձնաժողովի քարտուղար | Բաբկեն Աբրեյան |

**ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և արդյունքների ամփոփման մասին**

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնվելիք կուլտիվատորի նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված, որը կազմում էր 1 600 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց հանձնաժողովի անդամներին գրանցամատյանում կատարված գրառումների մասին: Ըստ այդմ հայտնի դարձավ, որ ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Մասնակցի անվանումը (անուն ազգանունը) | Հաշվառման հասցե | Հեռախոս |
|---|---|---|
| Պետրոս Պողոսյան (ֆիզ. անձ) | ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գ. Մեծ Սեպասար, 1-ին փող., տուն 39 | 093 22-30-78 |

Քարտուղարը գրանցամատյանը և գրանցված հայտը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հանձնաժողովը գնահատեց.

1. հայտ պարունակող ծրարը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին,

2. բացված ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

Գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը (անուն ազգանունը) | Ծրարը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին (համապատասխանում է/չի | Ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| | համապատասխանում) | (համապատասխանում է/չի համապատասխանում) |
| Պետրոս Պողոսյան | Համապատասխանում է | Համապատասխանում է |

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

*ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատել Պետրոս Պողոսյանի կողմից ներկայացված հայտը:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը: Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը հետևյալն էր.

ՀՀ դրամ

| Մասնակից | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|
| Չափաբաժին 1՝ Կուլտիվատոր | | | |
| Պետրոս Պողոսյան | 1 580 000 | 0 | 1 580 000 |

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 2

*Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը և ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Պետրոս Պողոսյանին՝ որպես գնման ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին բավարարող հայտ ներկայացրած մասնակից:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Հանձնաժողովի նախագահը հանձնարարեց քարտուղարին հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը

1. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել Պետրոս Պողոսյանի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

2. Ծանուցել Պետրոս Պողոսյանին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 3

*ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել 2019թ. մայիսի 31-ին, ժամը 10:00-ին Աշոցքի Հրապարակ 1 հասցեում գտնվող Աշոցքի համայնքապետարանի վարչական շենքում:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | ____________ | Գևորգ Հովհաննիսյան |
| Հանձնաժողովի անդամներ | ____________ | Արտակ Հովհաննիսյան |
| | ____________ | Ավետիք Ամիրյան |
| Հանձնաժողովի քարտուղար | ____________ | Բաբկեն Աբրեյան |